տերազմելով թէ՛ Բէդիր-խան բէկի եւ թէ՛ իմ հօր եղբօր՝ Խան-Մահմուդի հետ, նա երկուսին էլ յաղթեց, երկուսին էլ ձերբակալեց եւ յետոյ յանձնեց Օսման փաշայի ձեռքը: Երկուսին էլ իրանց ընտանիքների հետ տարան Ստամբուլ, այնտեղ բանտարկեցին. յետոյ Բեդիր-խան-բէկին աքսորեցին Կրետէ կղզին, իսկ իմ հօր եղբօրը՝ Խան-մահմուգին, իր ընտանիքի հետ աքսորեցին Սիլիստրէ: Եւ այսպէս Մելիք-Միսաքը առեց իր վրէժը:

Վերջին խօսքերը արտասանեց ծերունի քուրդը մի առանձին դառնութեամբ: Մենք ամէնքս միմեանց երեսին նայեցինք. մենք դարձեալ լսում էինք մի ծանօթ անուն, բայց ինձ գոնէ անծանօթ պատմութիւն:

— Այդ կռիւների մէջ, — աւելացրեց նա, — ես ստացայ այն վէրքերը, որ բոլորովին անդամալուծեցին ինձ եւ այն օրից այս երկու փայտերի վրայ եմ ման գալիս: Յետոյ եկաւ օսմանցին, այդ բերդը քարուքանդ արեց եւ մեր տոհմի բոլոր նշանաւոր քաջերին մաշեց բանտերի մէջ: Ինձ խնայեցին, որպէս արդէն անպէտք եւ կիսամեռ մարդու...

Խան-մահմուդին եւ Բեդիր-խան-բէկին նոաճելուց եւ նրանց աքսորելուց յետոյ, իրաւ է, քրդական բռնապետութեանը վերջ տրուեցաւ արեւելեան Հայաստանում եւ մանաւանդ Տարօնի եւ Վասպուրականի նահանգներում, եւ օսմանցոց իշխանութիւնը այդ ժամանակից աւելի հաստատուեցաւ այդ կողմերում: Բայց ինձ ուրախացնում էր այդ պատմութեան այն մասը, որ յիշեալ երկու գազանների անկումը կատարուել էր մի հայ հերոսի ձեռքով, այն հայի, որ մեր ամէնի դաստիարակը եւ սիրելին էր: Դա էր Պարսկաստանում հասարակ որսորդի անուան տակ ծածկուած խորհրդաւոր մարդը՝ Աւօն, որի իսկական անունը Մելիք-Միսաք էր, որը բոլորից թաքցրած ունէր, թէ՛ իր գործերը, թէ՛ իր անցեալ մեծութիւնը եւ թէ՛ իր ո՛վ կամ ի՞նչ մարդ լինելը:

Ես չեմ մոռացել, ընթերցող, բայց դու եւս յիշո՞ւմ ես այն ցաւալի պատմութիւնը, որ Ս. Տիրամօր տօնախմբութեան ժամանակ, իր վրանում, իմ քեռի Պետրոսը պատմում էր Որսորդի կեանքից: Նա ասում էր, որ Որսորդը հասարակ մարդ չէ, թէ նա Սասունի եւ Մոգաց երկրի զօրաւոր մելիքն է եղել, թէ այնտեղ ունեցել է իր սեփական բերդը, պատմում էր, թէ ինչպէս հայ տանուտէրերը, միացած իրանց հոգեւոր առաջնորդի հետ, դաւաճանում են նրան, մատնելով մի «քուրդ իշխանի» ձեռքը, պատմում էր, որ դաւադրութեան ժամանակ նշանակւում է Զատկի աւագ շաբաթ գիշերը, եւ երբ Մելիքը իր ընտանիքով բոլորել էր ճրագալոյցի սեղանի շուրջը, յանկարծ նրա ամրոցը պաշարւում է բազմաթիւ թշնամիներով: Նրա ամրոցը հրդեհում են, ընտանիքը կոտորում են, այդ միջոցին կրակի եւ արեան միջից յափշտակում է հաւատարիմ Մըհեն իր վիրաւորուած տիրոջը եւ, իր հզօր ուսերի վրայ բար-